



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌՐԻ ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1876

ԹԻԻ 4056

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ներկայ տարւոյս Դեկտեմբերի 11-երորդ օրն՝ անշուշտ պայծառ դարագլուխ մի պիտի հա- մարուի օամանեան կայսերութեան վարչական ազատասիրական մեծ ու վառաւոր քայլին հա- մար, զոր ինքնայօժար կամօք բրաւ : Նոյն օրն օամանեան Սահմանադրութիւնն որ թուրքիոյ բոլոր հպատակաց՝ առանց խտրութեան կրօնի, իրաւունքն կապահովէ և հաւատարութիւնն կը- հաստատէ օրինաց առջև, նոյն օրն կըսեմք, օամանեան Սահմանադրութիւնն մեծ հանդիսիւ կարդացուեցաւ ի Բարձրագոյն Դուռն, և կայ- սերական խաթիթի հիւմայունով մը հրատարա- կեցաւ ի ձայն 101 թնդանօթաց որոտմանց և ի մեծ ուրախութիւն մահմետական և ոչ մահ- մետական համայն ժողովրդոց : որք «կեցցե՛ք՝ Ապտիւլ—Համիտ մարդասէր կայսրն մեր, կեցցե՛ք՝ Սիւթհատ փաշա Մեծ—Եպարգոսն» կաղաղակէին յապացոյց իրենց մեծ գոհունակութեանը :

Ստոյգ է թէ նորահաստատ Սահմանադրու- թեան գործադրութիւնն ի սկզբան գուցէ քիչ կամ շատ դժուարութեանց հանդիպելով, ճշդ և կատարեալ կերպիւ չլինի : սակայն տարակոյս չկայ թէ լուսամիտ և ազատասէր Սիւթհատ փաշային հաստատուն յօժարամտու- թեանը և յարատե ջանքին առջև ամեն դժ- ճարութիւնք չուտով պիտի անհետանան, և

զգազդիարէն առաձն որ կըսէ՝ une tache com- mencée est à moitié terminée, (սկսեալ գործ մի՛ կիսով չափ վերացեալ է) կրնամք ամենայն վատահոլութեամբ յարմարեցնել օամանեան Սահ- մանադրութեան գործադրութեանը :

Արդէն ժողովրդական մեծ և ուրախալից ցոյ- ցեր եղան Տրմա—Պահճէի կայսերական պալա- տին առջև, ուր խալաւ և Գրիստոնեայ հազարա- լոր անձինք՝ Դեկտ. 11ին գիշերն ջահ ի ձեռին ժողովուելով, երախտագիտական զգացմունքնին հրապարակաւ կը յայտնէին Նորին կայսերական վեհախորհուրդեանը : Յիշեալ բազմութիւնն միևնոյն հանդիսիւ ի Պօլիս անցնելով, բարձրա- Միթհատ փաշային ապարանից առջև ևս իրենց շնորհակալքն յայտնեցին, և բազմութեան մէկ մասն՝ որ բաղկացեալ էր ի մահմետական ուսա- նողաց, յաւելցուց աղաղակաւ թէ պատրաստ է ի պատեւրագ և ի մահ քան թէ ընդունել զառաջարկութիւնն Ռուսիոյ :

Մահմետական ուսանողաց ազդասիրական այս բողոքը՝ ծանր նշանակութեան արժանի է : քանզի միայն ուսանողք չեն որ այս զգացմամբ ոգևորեալ են, այլև ժողովրդեան մեծագոյն մասն և կրնամք ասել բոլորն խստիւ կըմերժեն ըն- դրաւուն Պուլկարիոյ զինուորական զօրութիւն ի կողմանէ որեւէ օտար տէրութեան :

Կըվանսեմ որ իրաց այս վիճակն ի դերև հասնէ զխաղաղասիրական ջանքն և Պօլսոյ դեռ-

պանաժողովոյն, թէև նոյն իսկ Բ. Դուռն կը- փափաքի խաղաղական կերպիւ վերջացնել բը- ներկայ դժուարութիւնն :

Գեապանաժողովն իւր նախապատրաստական խորհրդակցութիւններն արդէն լմնցուցած լի- ուով, սկսաւ իւր պաշտօնական նիստերն ընել ի պաշտօնարանն ծովային դործոց ընդ նախա- գահութեամբ արտաքին գործոց տեսուչ վեհ. Սալիֆէթ փաշային : Մեծաշուք տեարք Աղէքս- Գառաթօրի էֆէնտին և Համամճեան Սարգիս էֆէնտին՝ որոց առաջինն արտաքին գործոց պաշտօնատան խորհրդական և երկրորդն խոր- հրդոյ ընդհանուր քարտուղար է նոյն պաշտօ- նատան, ներկայ պիտի գտնուին խորհրդակցու- թեանց գեապանաժողովոյն՝ նորա ատենա- գրութիւններն ի գիր առնելոյ համար :

Կըհաւատեն թէ գեապանաժողովոյն նախա- պատրաստական մէկ նստին մէջ, Սալիպիւրի մարքիզն առաջարկեւ է զվեհ. Նուպար փաշան՝ Եգիպտոսի իշխանութեան արտաքին գործոց նախորդ տեսուչն իբրև ընդհանուր կառավա- րիչ Պուլկարիոյ, յաւելցնելով թէ Նորին վեհ- մութիւնն լուսաւորեալ, ազատամիտ և կենցա- ղագէտ խոհական հայկազուն մի է, որոյ հետ փարիզէն անցնելու ժամանակ տեսակցեցայ և իւր հաւանութիւնն ի ձեռս բերի, բսեր է : Այս առաջարկութեան հաճութիւն տուեր է վեհմու- իկնաթիէվ զօրապետն՝ յառաջ բերելով թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ ՏՕՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Առաւան վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգայ Դ. եւ երկրորդ տարեդարձի բացման անարանի Մայր Աթոռոյ սրբոյ խնամքն :

(Շարունակութիւն եւ վերջ :)(1)

Աստուծոյ արժան էր արդեօք ընդ անուանց միոյ յաշակերտացն և զուսմունս նոցին ի մէջ բերել, և ասել թէ ով ոք յորում բաժնի գիտութեանցն և ընդուաց առաւելապէս քա- ղացաւ ի հարցաքննութեան ժամանակն : այլ քիչ մի ծանրատաղտուկ լսելիաց գերյարգոյ ուն- յեցաւս զբանս իմ առնիցեմ, շատ գրեմ առ տեղեալս զանուանցն եւեթ առնել յիշատակ- թիւն, առաջնալիւրդ և յոյժ գովելս զայնոսիկ ընծայելով՝ որք հանգերձ անսագիւտ վարուքն և զնաջիւք միանգամայն գրեմ թէ յամենայն իսկ ի մատունս ուսմանցն անվրէպ ճշգրտութիւն յայնցան քաջալուրծք, և լիարեւոյն գովու- թեան և մրցանակաց արժանաւորք : Եւ երբեք յարգ և գովելս զի երացեալսն փօքը ի շատե- յարեկան ընծայոս ուսմանցն և ի հարցաքնն- թիւն, Ըստ այսմ առաջնակարգ աշակերտք յոյժ գովելիք վկայեցան, և այսպիսիք ոմանք տան յառաջնունս դասարանի,

Եւ զանեա թամագեան ի Ստարոփոյկ ինքողայոս Բարամեան ի Շամախոյ :

Եւ զան Փիլիպպոսեան յԱսպահան :

Հայրապետ Պօղոսեան ի Դավրիժէ :

Եւ զան Չամիկեան ի Նորնախիչեանէ :

Եւ զան Սարգեան յԵրզնկոյ :

Եւ զան Սարգիս Գրիգորեան ի Դավրիժէ :

Եւ զան Բարսեղ Գրիգորեան ի Վան քաղաք :

Եւ զան Բարսեղ Գրիգորեան ի Սարգիսեան յԱրարատի :

Եւ զան Բարսեղ Գրիգորեան ի Դարբանդայ :

Եւ զան Բարսեղ Գրիգորեան ի Նախի- յաւան :

Եւ զան Պեթրեան յԱրարատի ի Նախի- յաւան :

Վ անան Միքայէլեան ի Վաղարշապատ :
Տիգրան Սահարեան ի Նոր Արմաիրի :
Առաքել Վարդանեան ի Վաղարշապատ :
Գեորգ Սիւլվազեան յԱլիքիլոյ գեղջի :
Ալիքսան Բարսեղեան ի Վաղարշապատ :
Խաչատուր Թադեոսեան ի Մաստար գեղջի :
Արշակ Էտիկեան ի Բարվանսարայի Ղազարի :
Գեորգ Միքայէլեան ի Պարսիս :
Մեքոն Արմաիւրեան յՕրպագրի խրիմոյ :
Մկրտիչ Արեւեան ի Վաղարշապատ :

Ընդ ամենայն աշակերտք քսան և մի, որք և ի սկիզբն ուսումնական տարւոյս փոխադրեցան յերկրորդն դասարան :

Եւ զերկրորդում դասարանին զառաջինն կա- լան զտեղիս ի յառաջադիմութեան ասպարիսին առաջնակարգ և յոյժ գովելիք :

Սարգիս տէր Գաբրիէլեան ի Բուրայիս :
Թադեոս Զարաբեան ի Շամախոյ :
Կարապետ տէր Մկրտչեան յԱրարատ :
Հմայեալ խուրդոյեան ի Տրապիզոն :
Միսաք Սիւլիւսեան ի Վաղարշապատ :
Միքայիլ Ստուպանտրեան յԱրարատ :
Եւ զան Սիւլիւսեան եւ

Պօղոս տէր Պօղոսեան յԱրարատ :
Յովնանեան Սեդիկեան յԱրարատ :
Համբարձում Ստամպոյեան յԱրարատ :
Աւետիս Զարկաբեան յԱրարատ :
Յովնանեան Սարգիսեան ի Հին Նախիչեան :
Գալուստ Թումանեան ի Մոզուր :
Պօղոս Սարգիսեան եւ Հայրապետ Ստեփաննոսեան ի Տիֆլիս :

Գեորգ տէր Բարսեղիմեանեան ի Պրոսպէ :
Յովնանեան տէր Դարեան յԱրարատ :

Եւ զերկրորդակարգ աշակերտք գովելիք :
Սահակ Բարսեղեան ի Կ. Պօլսոյ :
Բարսեղեան Սիւլվազեան յԱլիքիլոյ գեղջի :
Գրիգոր Թադեոսեան ի Շուշոյ :
Գալուստ տէր Խաչատրեան ի Չարք գեղջի :
Նորնախիչեանի :

Վարդան տէր Մկրտչեան ի Վաղարշապատ :
Ստեփաննոս տէր Սեդիկեան յԱրարատ :
Վահան Շահինեան ի Կեջրու գեղջի :
Միքայիլ տէր Գաբրիէլեան ի Սարգիսեան քանդակ, եւ Թադեոս տէր Մանուկեան ի Բուր գեղջի :

Ընդ ամենայն աշակերտք քսան և մի, և սո- քա յերկրորդն փոխեցան դասարան :

Իսկ որք յերկրորդի դասուն յառաջադիմք հանդիսացան և յոյժ գովելիք՝ սոքա են :

Գաբրիէլ Սարգիսեան ի Ղազարի :
Կոստանդին Միլիք Շահնազարեան եւ Սիմեոն Շահնազարեան ի Շուշոյ :
Ստեփաննոս Մայիսեան :
Գալուստ տէր Մկրտչեան եւ Հմայեալ Ստամպոյեան յԱրարատ :
Միքայիլ Սահակեան ի Ղազարի :
Նիկողայոս տէր Աւետիքեան ի Շուշոյ :
Գեորգ Խաչատրեան եւ Սեդիկեան Ստամպոյեան ի Նորնախիչեան :
Մուշեղ Մամիկոնեան, Զարուբին Պանդուխտի եւ Սեդիկեան Գրիգորեան յԱրարատ :
Սեդիկեան Շահնազարեան յԱրարատ :

Եւ զերկրորդակարգ աշակերտք գովելիք :
Մկրտիչ Զարաբեան եւ Ստեփան Մկրտչեան յԱրարատ :

Բարսեղ տէր Միքայիլեան ի Ղազարի, եւ Յովնան Սահակեան ի Շուշոյ :

Ընդ ամենայն աշակերտք երկուսուսուք ութ և տասն, որք եւ փոխադրեցան ի նոր դասարան Չարք : Եւ այսպէս մնան այլ ևս դասարանք երկու, որ բացցին յամեն 1877 և 1878, և ապա այնուհետեւ սկզբն արասցի ճեմարանականաց բաժնից, յորս դասախօսութիւնքն եղիցին՝ ոչ ևս սովորական կամ դպրոցական ոճով, այլ մա- նաւանդ իբրու ատենախօսութիւնք վարդա- պետականք զլէսուցէս գիտելեաց, զուսումնա- կանաց և զբանասիրականաց :

Իսկ յորոց մնացինն առ տեսեղ՝ հասակայն չներելոյ՝ ի նորումս յառաջնում դասարանի յոյժ գովելի աշակերտք՝ սոքա են :

Արշակ Գեորգեան ի Տաղայա գեղջի :
Սեդիկեան Ստամպոյեան յԱրարատ :
Ստեփաննոս Թորոսեան յԱրարատ :

Մանուկ Խաչատրեան յԱրարատ :
Ներսէս Պօսեան յԱրարատ և Նիկիլիոյ :

Եւ ի սոսա յաւելան զարդաւ նորեկ աշակերտք քսան և չորք, առհասարակ ընկալեալք յԱ. դա- սարան, և երկուքն յերկրորդ և յերկրորդ :

(1) Տես ի քիւսն 1054—1055 ԱՐՇԱՆՈՒՍՈՑ :

քաջ կրճատալէ զնուպար փաշան և նորա ար-
ժանաւորութիւնն : Միւս տէրութեանց երես-
փոխանքն ևս կատարեալ կերպիւ համամիտ
դաշնուեր են 'ի մասին այս առաջարկութեան :
Տարակոյս չկայ թէ Բ. Գուռն սիրով պիտի հաճի
յանձնել զընդհանուր կուսակալութիւնն Պուլ-
կարիոյ՝ լինելու նուպար փաշային , զոր նոյնինքն
'ի ժամանակին պատուաւ է փաշայութեան աս-
տիճանաւ : Սակայն դժուարութիւնն քրիստոն-
եայ կուսակալի մը ընտրութեանը վերայ չէ . այլ
նոյն երկրին օտար զինուորական զօրութեամբ
գրաւման , և մահմէտական բնակչաց զէնքը
ժողովելուն վերայ է : Եւրոպիոյ մի՞ որոյ մասին
դեռ պահանջողութիւնն անգամ չեն համամիտ կերեւին .
բայց Բարձրագոյն Գուռն՝ ըստ ամենայն երեւ-
մանց , պիտի չլինայ ընդունել զայն , և այս
պատճառաւ է . որ ամենայն դժուարութեամբ
կըջարուեալէ իւր զինուորական մեծ պատրաս-
տութիւնները . որոց դէմ յարձակին ոչ է գործ-
դիւրին՝ նոյնիսկ մի մեծ տէրութեան համար :

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏԱՍԻՍՆ ՄԻ

ԱՐԵՒԵԼԵՍՆ ՄԱՄՈՒԼՆ 'ի նոյնմբեր ամա-
տետրի իւրում , մեր գրաբառ լեզուին յարին՝
ստուերի մը , դիակի մը փարիլ է ասելէն ետեւ ,
ստեղծած շան մի տեղ դնելով զայն , նորա պոչը
բռնած կերթան , կըսէ , յամառ և պաշարեալ
գլուխներ . որոց 'ի կարգն կըդասէ և զԱՐՇԱ-
ԼՈՅՍՆ : Ինչ չնայաբնիկ ազնիւ ասացուած ի
բերան գլխաւոր դարձեալ միայն . . . որ ստանձ-
նեալէ զտեսչութիւնն քաղաքիս ազգային վար-
ժարանաց երկուց սեռից :

Մեր չուզելով մեր կողմանէ երկար պատառ-
խան դրել այսպիսի . . . ասացուածոյ , արժան
կըհամարմբ յիշեալ ամապոչոյն խմբագրին
գիտական վարժապետին՝ գերա . տէր Գ. Ա. Ե-

Արդ ի տես և ի լուր այսքանոյ յուսապա-
տար խնդութեան ընդ արդասիս օրհնութեան
վեհիգ . ազօր ից սրբոյ Ուխտիս միաբանութեան՝
որպէս և անդու ջանից վարժապետացն մերոց
և աշակերտաց , ներեսցէ ինձ Ձերդ վեհափա-
ռութիւն թուիս արձակել առ վայր մի մտաց
թեւօք , և վերադառնալ ի լուսավարչադպրութիւն
մեծի լերինդ Մանուկ , ի Հայկազնեանդ ասեմ
Ողիմպոս , շուրջ յաճել զականոցիս ի կայս և ի
կոյս արեւելից և արեւմտից , հիւսիսոյ և հարա-
ւոյ , և իւր ի պատկերի մեծի զԳեորգեանս ճե-
մարան մասնանից յուցանելով որդւոց Հայաս-
տանի որ ի սփիւռս իցեն՝ քարոզ կարգաւ առ
նոսա և առել . Մանկունք Հայաստանի , որդիք
սիրասունք վեհա . Հայրապետիս մերոյ Գեորգայ
Գ. զարթիք ի ձերմէ մահահանգոյն թմբութե-
նէդ յուսահատութեան , յոր ընկղմեալ կայք
յամաց հետէ , մուսացոնս գործեցէք վայրիկ մի
աղեալիցն մեծաց զորս կրեցէք և սպառեցէք .
սրբեցէք զարտասուս յաչաց ձերոց , և տեսէք
զակնկալութեանցն ձերոց նշոյլս պայծառապէս
փայլատեալ առ տեղեօքն յորս կսկեցին լու-
սաշաւիղ ոտք նահապետին Նոյի և Լուսաւորչին
ազգիս Գրիգորի Պարթևի և Ներսիսի մեծի , և
Մանկեանցն և Մեծորպետաց , և զմայեալք
բաժակաւ անտրտում ուրախութեան եկայք
խառնեցէք զձայնս հրճուանաց ձերոց ընդ-
բարեբանութեանց մերոց յորդորմունս և օրհ-
նեցէք զսկզբնապատճառն այսմ բարեաց :

Հայա , օրհնեցէք , որդիք շնորհապարտք ,
զբարեխանս ձեր Հայրապետի բարենշան յայ-
սմ տարեկանի , ի մեծաշուք հանդիսի տօնա-
կան աւուրս սրբոյն Գեորգայ քաջազգի զօրա-
վարի : Մարդեցէք Անուանակցի նորին կեանս
երկարաձիգս , զի ևս քան զկս զուարճասցի ի
տեսիլ բարդաւաճելոյ իւրումն ձեռակերտի
ընդ մեծազօր հովանաւորութեամբ օգոստոս
կայսերն Ռուսոյ , և աստտին վայելեցէ ընդ-
ամս բաղումն ի յոգնաբեղուն արդիւնս բար-
եաց օժտելոց յիւրմէն ի փառս և ի պայծառու-
թիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի :

վագեան սրբազանին ատենախօսութեան հետեւ-
եալ տողերն յառաջ բերել . ատենախօսութիւն՝
զոր 'ի 25 Սեպտեմբերի ներկայ տարւոյս բրաւ
սուրբ Էջմիածնի ճեմարանին բացման երկրորդ
տարեգարծին առթիւ :

«Արդարեւ իսկ տեսաւ յայտնապէս 'ի հարցա-
քննութիւնս անդ՝ զի առաւելագոյն իմն դոգ-
ցես անակնկալ գործեալ են դուք (աշակերտք)
յառաջագիմութիւն 'ի վարժս հայկաբանութե
նչ 'ի դիր միայն՝ այլ և 'ի բան և 'ի զրոյց 'ի
գրոյցն մեր բարբառ պարտաւ ճոխ և պարտա-
ւարտ : Այս վկայութեանն որոյ ձեռնհասութեանը
վերայ ոչ ոք կըտարախուսի , յատնապէս կըտես-
նուի թէ Ա. ՄԱՄՈՒԼՆ և համամիտք իւր՝ մեր
գրաբառ լեզուին համար մեռեալէ , դիակ մըն
է ասելով , պիտի չլինան մեռուցանել զայն՝
վերջին ճգամբ իսկ աշխատելով բառնալ զդա-
սառութիւնն գրաբառին յազգային վարժա-
րանաց զմիւսնոյ :

ԱՐԵՒԵԼԵՍՆ ՄԱՄՈՒԼՆ կըյաւելու թէ՛ ԱՐ-
ՇԱԼՈՅՍՆ կարծէ թէ գրաբառ կըդրէ և անոր
կեանք պիտի տայ : Մեր ևս ի պատասխանի
կըսեմք թէ՛ յիշեալ հանգէսն կարծէ թէ զաշ-
խարհաբառն կըկազմակերպէ և անոր նոր կեանք
պիտի տայ՝ գրոց բառից մէջէն այրը հանելով՝
ճանաչելն՝ ճանչել , ուսանելն՝ ուսնել , դեռա-
կունն՝ դեռկուն , և այլն , գրելով . իսկ ԱՐՇԱ-
ԼՈՅՍՆ չկարծեք թէ գրաբառ կըդրէ և ոչ կը-
կարծէ թէ կեանք պիտի տայ նմա , պատուա-
կան իրաւամբ մը որ մեր գրաբառ լեզուն կեն-
դանի է և կենդանի պիտի մնայ ցորչափ ժամա-
նակ որ ընդհանուր Հայոց ազգն զգոյնութիւն
իւր ունի և կապի . այլ ԱՐՇԱԼՈՅՍՆ կաշխատի
գրաբառին հիման վերայ և ի նա հետզհետէ
մերձեանալով դրել և աղնուցնել զաշխարհիկ
բարբառ մեր՝ սրպէսզի իւր լեզուն գիւրդմանայ
ինի ընդհանուր Հայոց՝ ի Հնդկաստան , ի Ռու-
սաստան ի Պարսկաստան և այլուր բնակելոց .
և ըստ այսմ մասին կըհետեւի յոյն լրագրաց և
յոյն գրագիտաց շաւղին , որք օրըստօրէ մօտե-

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ

Ընդ Պագի (Չուիցցերիս) :

Պագէլ , 18—30 Նոյեմբեր 1876

Ազնիւ ԱՐՇԱԼՈՅՍ ,

Գարնանային եղանակումէր , երբ ես վերջին
անգամ առ ձեզ գրեցի . ստոյգ խօսելով երբէք
պատեհ առ ի՞նչ չգտայ վերստին քեզ հետ խօսե-
լոյ : Երկարատե լուրքիւն մ'էր ասի , որոյ
պատճառն ուսանողի մ'ունեցած առօրեայ
ծանր զբաղմունքն են , զորս դու քս անձնական
փորձառութեամբ անտարակոյս լաւ կըճանաչես :

Գարնան՝ ամրան տօթագրին և զուարթ օրերն
յաջորդեցին . օրեր՝ որք ամեն մարդու աչաց
առջև նոր տեսարաններ յառաջ բերին տիե-
զերքիս անհուն թատերաբեմին վրայ , որք դե-
րասանաց տմանց կարի թանկ եկան : Այս տիտուր
տեսարաններ , որոց վրայ ուշիմ պատմագիրը չէ
կարող առանց սարսուռ մ'զգայլոյ յետ նայել :
Արեւելքում մի շողուն աստղ յանակնկալս խա-
ւարեցաւ և քաղաքական աշխարհին հորիզոնին
վրայ սեւ ամպերու մթին չորք մը հսկայաբարձի
տես եկաւ , ահ ու երկիւղ պաշարեց Արեւմտեան
տիտիւմաթից արդէն 'ի վաղուց սարսափով լի
սրտերն : Ամենայն ինչ ակնթարթի մը մէջ ըս-
պառնալից կերպարանք մ'առաւ և քիչ մնաց
որ Մեծին Սկիւրտայ պատահածին պէս յետ ո-
րոտման տեղատարափ անձրեւ մը քաղաքական
աշխարհին այց առնէր : Բայց փառք վերիննա-
խաննամութեան , երկնից կապուտակ կամարն
վերստին մեր աչաց առջև պարզուեցաւ , թէ և
կրկին մթնելոյ համար . . . :

Ի՛նչ ինչ կրնանք ըսել և ընել առ այս . զի այս
է բնութեան օրէնքն և այս մեր աշխարհին
մշտնջան կացութիւնը : Այժմ՝ ձմեռն վերստին
առ մեզ ժամանեց . հոս նայուացք մ'ի վերայ
դաշտից , լեռանց և խիտ անտառաց՝ կապացու-
ցանէ զայս . ուր է գալարադեղմարդադետինը՝
յորում հովիւն իւր ուխտաց հօտերն կարածէր՝
ուր են այժմ վարդենին՝ իւր հրաշալի սիրուն
կոկոնիք և ֆալգեհալս ու շահօքրամն և այլն .

նայով իրենց հին լեզուն՝ էլէնիքային , կաշ-
նուայնեն զաշխարհիկ բարբառ իւրեանց ,

Մեր այսչափ միայն խօսելն բաւական համա-
րելով , յօժարամիտ կըհրատարակեմք զհետեւեալ
ընդարձակ յօդուածն 'ի պատասխանի Ա. ՄԱՄ-
ԼՈՅ և Յ. Ա. Բ. պարոնին :

Զմիւռնա , 20 Դեկտ. 1876

Յարգոյ խմբագիր ԱՐՇԱԼՈՒՍՈՑ ,

Հաճեցէք հետեւեալ յօդուածը ձեր պատ-
ուական լրագրոյն առաջիկայ թուոյն մէջ հրա-
տարակելով պարտաւորել զնուստս :

Պ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ

ԳՐԱՐԱՌ ԹԷ ԱՇԽԱՐՀԱՐԱՌ

«Ի մատենագրութեան յայսմիկ(1) գլխոյն
այն է գծինն , գիտնոնաւորն եւ գնալագաւորն
մեր ի կիրարկի բարբառ , եւ ոչ գնալն զկա-
կեալ , իմն գոսակացն , գիտնոնաց կողմանց
գաշխարհիկն անուանեալ՝ աղիւսար լեզու :
Չի որչափ համեղական եւ ազգոյ եւ գեղեցիկ
առաջինն է , այնչափ անհամ է վերջինն , բոյ
տգեղ , անհեթեթ եւ գուրի միանգամայն ի կա-
րեւորացն կանոնաց ուղղախօսութեան , որ-
պէս եւ շատ իսկ , ոչ յանճարից արանց , որ
քաջամուտք լեզուիս ճանաչելն՝ վկայեմ այսմ :

Մեր Մագիստրոս եւ ասպետ ,
դասաւոր հայկաբանութեան եւ կրօնի
Լազարեան Հեմարանի :

Սոյն վերնագրով յօդուած մը կարդայնք
ԱՐԵՒԵԼԵՍՆ ՄԱՄՈՒԼՆ վերջին թուոյն մէջ , նոյն
պէս անոր յարակից նամակ մը Ե. Ա. Բ. ասորա-
գրութեամբ : Առաջինը՝ ըստ մեզ , գրաբառի
յուզարկաւորութիւն մ'էր , և երկրորդը՝ անոր
վրայ դամբանական ճառ մը : Երկուքն զլուրին
կարեւորութենէ զուրկ . վասնզի փոխանակ խն-
դիրը մանրամասնօրէն նկատողութեան առնե-
լու , փոխանակ գրաբառի և աշխարհաբառի
հիմերը հետազօտելու , փոխանակ լեզուի այս
երկու ճիւղերու մէկմէկու հետ ունեցած առը-
նութիւնը և յարակցութիւնը ուշի ուշով զնու-
թեան առնելու , փոխանակ վերջապէս համոզե-

(1) Յիշատակարան գործոց Լազարեան պայազատաց :

սպիտակազգեստ եղանակը՝ մանգաղ 'ի ձեռին՝
յարձակեցաւ անոնց վրայ և նոցա կենաց վերջ
ու վախճան տուաւ : Ստուգիւ իմաստունն Սո-
ղոմոն իրաւամբ ըսած է՝ «Ունայնութիւն ունայ-
նութեանց , ամենայն ինչ ընդունայն է» : Եւ ոչ
ապաքէն մարդոյս կեանքն ալ ամեն նման է
փափուկ ծաղիկ մը , որ սոսք կայ և կապի ,
կուրախանայ և կուրախացնէ , բայց վաղ . . .
նչ քանի տևուր է ասի գիտնալն ու ըսելը . . .
Բայց վաղ մահն իւր ցուրտ և սառնամապտ
ձեռքերն երկնցնելով կըկորդէ այդ սիրուն
վարդն , որ հաղիւ իմն վայելց իւր կեանքը :
Սակայն միթիւարուէ՞ , մի մարդ , զի ինչպէս
վարդենին 'ի ձմրան կըչորանայ , որպէսզի դա-
նան աւելի փառաւոր ծաղիկ , այսպէս ալ դու
կիջնես 'ի գերեզման , որպէսզի նոր կեանք ըս-
տանաս . այն կեանքը՝ որ յաւիտեան կըտեւէ .
կեանք մը , որ դրախտէն , յերկնային երկնէն
կըսկսի և ալ իսպառ չվերջանար . զի նա յԱս-
տուծոյ կըբնակի . վասնորոյ իրեն նման յաւիտե-
անական է : Ուրեմն քան լիւր , ու վաղ մահիւ
նացու , մոխր յօժար կամօք 'ի տուն քս խաւար ,
երբ քեզ համար արեւն վերջին անգամ առաւ-
տուն կըծաղի՝ երեկոյեան քու շիրմիդ վրայ
մարն մտնելոյ համար . երթ և կայ անդ , բայց
ոչ թէ յուսահատ զլոյս այլ ևս չտանելոյ երկիւ-
ղիւ , ոչ . այլ այն հաստատ յուսով և քաղցր
մխիթարութեամբ թէ՛ ինչպէս ձմրան գարունն
սմին նման մահուան՝ փառաւոր յարութիւնն
յաւիտեանական կենաց պարտի յաջորդել և հե-
տեւիլ . զի այս է քո ամենիմաստ Արարչիդ սուրբ
կամքը և անխփոխելի կարգադրութիւնը :

Ժամանակը վատ է , չոր է , գէշէ , որպէս կը
սեն հոս մարդիկ առհասարակ . որ թէ և ինքնին
ճամբարտ է . բայց տարակոյս չկայ որ ժամանակը
այս պարագային տակ օրուան 12 ժամը՝ և գի-
շերն ալ միասին հաշուելով 24 ժամերն պէտք
չէ հասկանալ . քանզի անուրանալի է որ ժամա-
նակը յառաջ քան զտեսչութեան մարդոյ կար ,
զոր տեղեկացն Արարչիդ Բարի կոչեց . տրեմ
չարը , վատը և գէշը ժամանակը չէ , այլ մարդը :

լու. պիտոյութեան թէ առանց ամենակից գրա-
բանի աշխատանքներու կարող է վարժապետ մը
մարտնչել աշխարհաբան առանց աշակերտաց
ԱՐԵՎԵԼԱՆ ՄԱՍԻՆՈՅ վեց էջեր խնդրին կար-
գադրութեան յարակցութիւն չունեցող քա-
ղաքներով լեցուած են, և որոց մէջէ իրապէս
մեր խնդրին յարակցութիւն ունեցող կէտերու
պատասխանելով պիտի փութանք լեզուի այս
երկու ճիւղերը քննութեան առնուլ որոշ եղրա-
կացութիւն մը հանելու համար:

Աշխարհաբան խիստ ճիւղն և տարածուն է
և ասոր ինչպէս դուք նոյնպէս և մենք կատա-
րելապէս համոզուած ենք. այս պատճառաւ կը-
յայտենք որ անկարելի է զայն քերականական
կանոններու ենթարկել առանց չոր ու ցամաք-
ութեան կամայականութեան դատապարտե-
լու: Որքան քերականութեան և խօսքերու մէջ
անթիւ են այնպիսի բառեր որ իրենց հոլովում
ներքէ և անհնգումները կը փոխեն աշխարհաբա-
նի մէջ և աւելի քաղցրաւոր և ներկայնակ
եղանակ համար անխորհիւր դարբան ձևով կը-
գործածուին: Ասկէ կը հետեւի որ աշակերտի մը
մարտնչել աշխարհաբան առանց չոր համար ան-
հրաժեշտ պիտի ըլլայ միևնոյն միջոցին նաև
գրաբան քերականութեան ուսումը: Կամ թէ
այս վերջինը չըլլայ անուրանալի է որ աշխար-
հաբանի ամեն քաղցրութիւնները և փոփոխու-
թիւնները չկորուսելու համար այնպիսի քերա-
կանութիւն մը յորինել պէտք է որ ի հարկէ
գրաբան քերականութեան կրկին ստուարու-
թիւնը պիտի ունենայ միևնոյն ձևը ամենամեծ
դասնաւոր այս վերջինը բնագործակութիւնն է:
Իսկ թէ ինչպէս ամեն հայերու նոյնպէս և ձեր
փախաբան աշխարհաբանի ներդաշնակութիւնը
որ իր ճիւղն և տարածութեան ընդարձակ ըլլա-
լուն մէջ կը բռնուի ակի, նկատողութեան չառ-
նելով զայն միօրինակութեան դատապարտեք:
Թողունք որ ուսանողք իրենց վարժապետաց և
դուրսը կարգացած աշխարհաբանին պիտի չի-
մանան, թիւրեւ որ այս կերպով նորօրինակ
լեզու մը պիտի հնարուի անմերձեցալի և այլա-
նակ, ինչպէս Պ. Չերաշի քերականութիւնը,
զոր ի մասին գործածելութեան լաւ քննադա-
տած է ֆոլիո Երկրորդ թուոյն մէջ. այլ նաև
հարկ է նոյն լեզուին մէջ քաջալարժ վարժա-
պետներ փնտռէք նախ որպէսզի զայն աւան-
դելու կարող ըլլան: . . . ասկէ դատ ձեր քերա-
կանութեան հաստատուելէ վերջ աշխարհաբա-
նը դուռ պիտի չարուեսակէ իր ճիւղն և տարա-
ժուն ընթացքը, անտարակոյս ձեր հիմնելիք
քերականական կանոններն իսկ խորտակելով:

Աշխարհաբան բառերը այսօրուան օրս այն-

քան քաջալուստած են որ յիշուի դիտողութիւն
վիշտ և զայրոյթ կը պատճառէ. օրինակի համար
մին իշուլ կըսէ, ուրիշ մը իշուլ, իշուլ, իշուլ,
իշուլ և առհասարակ չեմ գիտեր որչափ փոփոխու-
թիւններ: Ասիկա միակ օրինակ մ'է որու նման-
ներ գտնել խիստ դուրին է: Այս միակ բառը,
Աստուած իմ, հինգ անգամ խոնարհել պէտք է
սորվեցնել աշակերտին, իշուլ անկատարը իշու-
պէս պէտք է ընդունել: իշուլ. . . . Դուք կա-
ռարկէք որ գարուս պահանջումը յառաջագի-
մական է, ազգերը և լեզուները ցատկոտելով
չեն յառաջագիմեր այլ քայլերով, և ձեր այս
ընթացքը ոճի մ'է չէ թէ գրաբանի դէմ որ
անայլայլելի օրէնքներու վրայ կայացած է, այլ
աշխարհաբանի դէմ, զոր քաժմին կերպով
կայլափոխէք օր օրի զայն գրաբանէ աւելի
խրթին ընելով և առանց դիտելու իր հիմերը
խախտելով:

Լեզու մը այն ատեն կրնայ աւանդուիլ դըպ-
րոցներու մէջ երբ հիմնական կանոններու վրայ
կայացած լըլլայ. երբ բառերու հոլովումները,
բայերու խոնարհումները, անոնց արմատները
և համաձայնութեան կանոնները նոյն իսկ տառի
մասին, անայլայլելի օրէնքներու հպատակած են:
Երբ այս պահանջումները չունի մեր աշխարհա-
բանը, երբ այսօրուան օրս աշխարհաբանի
շատագոյններու իւրաքանչիւրը քաժմին կերպիւ
կայլափոխէ բառերը, բայերը և խօսակցու-
թեանց ձևերը այն ատեն վերստին հարկ է դի-
մել այն աշխարհաբանին որ գրաբանի ուսումն
կարտադրի և ընդունակ է մեր ամենու պահան-
ջած միօրինակութեան, որ ինչպէս կըսէ ԱՐԵ-
ՎԵԼԱՆ ՄԱՍԻՆՈՅ, հարկ է գաղափարներու հա-
զորդակցութեանց համար:

ԱՐԵՎԵԼԱՆ ՄԱՍԻՆՈՅ կըսէ որ գրաբանի յա-
րիւր ստուերի մը, գիւղի մը փարիլ է: Մենք
չենք ըսել որ դպրոցին մէջ վերէն ի վայր գրա-
բանով չափէ, այլ աշակերտ մը վերի սրահը
անցած ժամանակ կամ աւելի կանուխ հարկ է
գրաբան քերականութեան վարժեցնել անոր
աշխարհաբան հիմնական և կանոնաւոր ընելու
համար. փաստի ինչպէս վերք քանի մը ապա-
ցոյցներով հաստատուելիք, առանց գրաբան
աւանդելու աշխարհաբանը կամ հազարի դժ-
ուարութիւններ պիտի գնէ ձեր ամէն մէկ քայ-
լախօսին կամ չոր ու ցամաքութեան պիտի գա-
տապարտուի: Ու թէ ամեն փորձէ ի վեր դեռ
դժամագոյնացաք որ յառաջագիմ աշակերտներէ
և ոչ մին չըլլաւ հետեւի յարգելի տեսին աշ-
խարհաբանին: Փաստի անհետեւելի է յարանա
փոփոխութեանց ենթարկող ըլլալուն և անայ-
լայլելի հիմնական օրէնքներու վրայ կայացած

չըլլալուն համար: Ու թէ ամեն փորձ ձեր աշ-
քերը չբացաւ և երկրորդ փորձ մ'ալ կրնէք
առանց անցնալ խրատուելու, առանց մտածե-
լու որ ձեր փորձի ենթարկեալները մեր ապա-
քանչիւրին տարիներու ի զուր վասնիւր՝ անոնց
ապագայ կենաց յուսոյ դուռերը խորտակել է:

Մեր աշխարհաբանը առանց գրաբանի օգ-
նութեան անաւանդելի է. աւանդեցէք գրա-
բան քերականութիւն, բայց իր գրութիւնները
աշխարհաբան դրելու տեղէք: ԱՐԵՎԵԼԱՆ ՄԱ-
ՍԻՆՈՅ սխալ կը մեկնէ երբ կը կարծէ թէ ժողո-
վուրդը կուզէ որ իր զաւակները գրաբան
գրեն. ոչ ժողովուրդին ուզածը այս չէ, այլ
գրաբան հասկնալ և աշխարհաբան գրել: Իսկ
եթէ կառարկէք որ գրաբան սորվող աշակերտ
մը ինչպէս կրնայ աշխարհաբան գրել, կը պա-
տասխանենք թէ քանի որ աշակերտ մը առաւօ-
տէ մինչև իրիկուն աշխարհաբան կը խօսի, քանի
որ իր միւս գրաբանը բոլորն ալ աշխարհաբան
կաւանդ ունի իրեն, կը հարցնեմ որ միթէ կարե-
ւորութիւն պիտի ունենայ մասնաւորաբար աշ-
խարհաբան քերականութեան պարապելու:

Այսօրուան օրս անժխտելի է որ օտար լեզ-
ուայ քերականական կանոնները մեր գրաբանի
յար և նման են, կամ աւելի յայտնի կերպիւ
խօսելով մեր քերականութիւնը փոքրիկ բացա-
ռութեամբ զանոնք իր մէջ կը բռնուի: Աշ-
ակերտ մը գրաբանի տեղեակ ըլլալով խիստ
արագաբար ու հիմնապէս կը յառաջանայ օտար
լեզուի մէջ և ասոր փորձը անձնապէս առած
ենք. այլ աշխարհաբանը այսպէս չէ, ընտիր
աշխարհաբանի քերականութիւնը այնքան հե-
ռի պիտի ըլլայ օտար լեզուայ քերականական
կանոններէ որքան մէկմէկէ հեռու են թերևս
աշխարհիս հակառակայ բնակիչները: Ասկէ ալ
անուրանալի կերպիւ պիտի հետեւի որ մայրենի
լեզուի քերականութիւնը երբեք պիտի չնաս-
տէ աշակերտին օտար լեզու ուսանելու մասին:
Այս պատճառաւ հետեւելիք ժամանակի կորուս-
տը և չարիքները կրնաք երեւակայել:

Ձեր բռնած ներկայ ընթացքը ուրիշ բանի
մը չեմ կրնար նմանցնել, բայց եթէ առանց
դէնքի և պաշարքի պատերազմի երթալու: Այս
օրինակ ծիծաղելի արշաւէ մը ինչ կրնայ յու-
սացուիլ խեղճ զինուորին համար. անտարակոյս
կորուստ և մահ: Ձեր արշաւի ասպարէզը աշ-
խարհաբան է, ձեր զէնքերը և պաշարները
պէտք են ըլլալ ամեն տեսակ դատադիրքերու և
ի մասնաւորի աշխարհաբան բառերու ամէն
այլափոխութիւնները պարունակող բառգիրքե-
րու պատրաստութիւնը: Երբ այսօրուան օրս

որ իւր վարքովը, բարքովը, զգացմամբը, խոր-
հրդածութեամբը և գործովը զժամանակ բարի
ախորժելի, լաւ և հաճելի, կամ վատ, դէշ,
ղղուելի և տաղտկալի կընէ: Ձոր օրինակ, մի
քանի շաբաթ յառաջ քաղաքս մի մեծ հրդեհ
պատահեցաւ, որ հոյակապ ֆապրիկս մի և շէնքին
անմիջապէս կից եղող բաւական տներ սպառեց
և միւրոյ կոյտի վերածեց: Ուսկից ելաւ կրակը,
ինչ էր դորս պատճառն. ոչ ոք գիտեր, զի այս
սակալի գաղտնիք մի, տատանայական գաւա-
ղութիւն մի, դժոխային չարամտութիւն մի
կըրտնադակէր, որ յետ մի քանի աւուրց
յայտնուեցաւ: Արեւն և շահախնդիր անխիղճ
մի մարդ, (ախտոս որ թէ ինքն և թէ իրեն
նմաններն երկրիս ամեն կողմերն այս անունը
կը կրեն. . .) իւր տունը հանդերձ կահարասեօք
խարդախութեամբ իւր արժէքէն աւելի բարձր
գնով ապահովագրութեան կը դնէ և հարստու-
թեան հրակէզ տարփանքով վառուած գիշեր
ցերեկ հանդիստ չկրնար գտնել մինչև որ իւր
վատ սրտին յղացած սանդարտմտական վայ-
րազ խորհուրդն ի դորձ կածէ, այն է իւր
տունն անձամբ կրակի տալն, նորա յաճելն
գառնալէն յետոյ կորիկ և փայլուն ոսկիներն
ձեռք բերելոյ անտարակոյս գաղանակաւ ուրա-
խութեամբ և յուսալիւր վտահութեամբ: Բայց
խեղճ ողորմելին կարճամտութեամբ Ս. Աւետա-
րանին այն սուկեղինիկ խօսքը, որ Աստուածորդ-
ւոյն ճշմարտաբան բերանը արտասանեց, «Ձիք
ինչ ծածուկ, որ ոչ յայտնեսցի», ի հաշիւ առնը-
լոյ մոռացած էր, անտարակոյս կամ չգիտնալով,
և կամ որ աւելի հաւանական կը թուի ինձ, ար-
համարհելով զլոյսն Տեառն. (այսպիսի անօրէն և
խմտալի շահախնդիր մարդկանց թիւը՝ աւանդ
որ ինչպէս է ըստպարտ, նոյնպէս ալ յԱսիա և

յԱմերիկա օրըստօրէ աւելնալոյ վրայ է. (և ո՞վ
կրնայ ըսել որ Հայն այս մասին գոնէ ի բաց
առեալ լինի). . . . Այժմ գործը յայտնուած և
ձեռնարկութեան ճարտարամիտ հեղինակն ի
բանտի է, ուր նա կալ և մնալ պարտի ցվճա-
րումն յետին նաքարակտին, Հիմա ինչ ըսենք
առ այս. ժամանակը ըրուա ասի, թէ վերոյիշ-
եալ անձին չար սիրտը. ու չիմ ընթերցողը կարող
է վճիռ տալ ուստի ալ հարկ չկայ խօսելոյ:

ԱՐԵՎԵԼԱՆ ՄԱՍԻՆՈՅ 1652 թուոյն մէջ վեցերորդ
ԲՅՁՄԱՎԵՊ հանդիսարանում հրատարակեալ
մի վիճակագրական տեղեկութեան նկատմամբ
Հնդկաստանցւոյ միոյ առ խմբագրութիւնը
ուղղեալ հարցումն ընթերցայ: Յիշուի օրինա-
ւոր և արգարացի հարցում. զի այսպէսմի ըւր
թէ կաթոլիկաց թիւն օսմանեան պետութեան
մէջ 900 000 լինի, ինձ բոլորովին զերծ ի
սխանալաց չիմելի: Սոյն դիտողութիւնը կար-
գացած ատենս մի ուրիշ կէտ մտածութեանս
առարկայ եղաւ. այն է Բաղմալիպին զհայս՝
Հայադաւանք կոչելն, իբր թէ Հայութիւնն 5000
այսչափ տարիներէ յետոյ այսօր ԱԶԳ մ'ըլլալէ
դադրած լինէր և ի գաւառութեան փոխուած
ըլլար: Ահաւասիկ մի անուանակոչութիւն՝ որ
արդարեւ վերոյիշեալ Հանդիսարանին վեղարա-
ւոր խմբագրին քիչ պատիւ չբերեր: Այս ստու-
գաբանական (էթիմոլոգիք) սխալը ըստ իս առա-
ւել պարսաւելի է քան զվիճակագրականը. ու
բովհետեւ ասի կրնայ մի ուղղագրական սղորդումն
լինել, բայց այն բառական կամուրք վրէպ մի.
աղգատեաց և արհամարհական զգացմամբ
դիտմամբ եղած խոտորում մ'է ի ճշմարտու-
թենէ, որ զՀայուն Հայուն սիրան կարելնէ,
երբ նա կըրտենէ որ մի միաբանութիւն՝ որոյ
Եւրոպացիք «Հայկական Ակադէմիա» անուն կը

տան ընդհանրապէս, զհայ ազգութիւնն ոչ թէ
ազգ, այլ լակ իբր գաւառութիւն կընկատէ և
իւր ձայնն (օրկան) եղող Բաղմալիպին մէջ «Հայ-
ադաւան» անունն կը տայ նմա, իբր թէ Հայ-
ութիւնն մի կը ընդ լինէր: Սակայն Հայը միշտ
ներողամիտ եղած և անյիշաչար գտնուած է
յարաժամ բոլոր անոնց դէմ, որք ամեն առ-
թիւ թէ իւր սուրբ կը ընդ լինէր և թէ թանկագին
ու նուիրական ազգային պատուոյն և զգացման
վրայ յարձակած են: Այժմ, Հայը ներած է ի-
րենց ի բոլոր սրտէ. ուստի սոցա ալ կընեղէ
նա իրենց այն սխալը. բայց ի միտ կառնու և
կը պահէ իւր յիշողութեանը մէջ ի նախատինս
իւր թշնամեաց՝ այս տեսակ ազգատեաց ոգի և
զգացում, որոն կողմէ ալ, ուր և ինչ առթիւ
ալ որ արտայայտեալ լինի: Իսկ դու, ո՞վ պատ-
ուական ԱՐԵՎԵԼԱՆՍ, որ յարաժամ ի պատրաս-
տի կաս ի պաշտպանութիւն Հայրենեաց, հաճէ
մարդասէր լինել ներկայիս մի փոքր անկիւն
շնորհելոյ՝ քո խորհրդածութիւնդ ալ առ այս
չըլանալով: (1)

Մնամ քոյդ
Մ. Պ. Հ.

(1) Թեհն մեր ազգիս բոքակցիմ դիտողութիւնքն ի
մասին Հայադաւանք բառին՝ ճիշտ եւ ստույգ էն, այ-
լոս ամենայնի մէք չեմք կրնալ հաւատալ քե ԲԱԶ-
ՄԱՎԵՊ հանդիսարանն անբարեմտութեամբ եւ դիտ-
մամբ գործածած լինի զնոյն բառն՝ այլ կարծեմք քե
Յուդայական բառին քով անուշադրութեամբ դրած է
եւ զհայադաւան բառն, որ անշուշտ սխալ մըն է,
բայց ոչ կամաւոր. քանզի հոռմեական ողջամիտ հա-
մագրք մեր, եւ մանաւանդ ՎԵՆԵՏԻՆԱ արժա, Միա-
բանութիւնն, ոչ կուրսանալ եւ ոչ կըրնայ ուրանալ
զՀայ ազգութիւն իւրեանց. հետեւաբար նորա համար
բշնամական ոգի ալ ջեմ կըրնար ունենալ:

